ՀՏԴ 929:791.43(Փարաջանով)
Doi:10.54503/0135-0536-2024.3-275

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ «ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎ – 100»*

Հայ նշանավոր կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների անցկացման համար ստեղծված Կառավարական հոբելյանական հանձնաժողովի որոշմամբ, ՀՀ ԿԳՄՍՆ աջակցությամբ 2024 թ. սեպտեմբերի 10–12-ը գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Սերգեյ Փարաջանով – 100» խորագրով միջազգային գիտական կոնֆերանս, որը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը՝ Սերգեյ Փարաջանովի թանգարանի հետ:

Իր բացման խոսքում Արվեստի ինստիտուտի տնօրեն Աննա Ասատրյանը, *մասնավորապես, ասաց. «Այսօր նշանավոր օր է Արվեստի ինստիտուտի տարեգրության մեջ, քանի որ ակադեմիական փարաջանովագիտության մեջ առաջին անգամ է կազմակերպվում նման ներկայացուցչական ու մասշտաբային գիտական կոնֆերանս: Վստահ եմ, որ մեր միջազգային գիտական կոնֆերանսի արդյունքները կդառնան կարևոր հանգրվան արվեստագիտության ասպարեզում և նոր խոսք՝ փարաջանովագիտության մեջ»:*

Ողջունելով գիտաժողովի կազմակերպիչներին, մասնակիցներին և հյուրերին՝ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը *նկատեց. «Այսպիսի գիտաժողովի հրավիրումը հրաշալի նախաձեռնություն է, որովհետև Փարաջանովն աշխարհահռչակ կինոբեմադրիչ է: Փարաջանովի կամ Սարգիս Փարաջանյանցի խոշոր վաստակը կինոարվեստի զարգացման ասպարեզում կարող է նոր լույս սփռել հայ և համաշխարհային կինոարվեստի զարգացման գործում»:*

Իր ողջույնի խոսքում ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը, *մասնավորապես, նշեց, որ փարաջանովյան կերպարն իր համար Նոբելյան մրցանակի կերպար է, և բարի երթ մաղթեց կոնֆերանսի մասնակիցներին:*

Այնուհետև կոնֆերանսի մասնակցներին ողջունեցին Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ռեկտոր, արվ. թ., դոցենտ Սաա Նալբանդյանը *և Սերգեյ Փարաջանովի թանգարանի տնօրեն* Անահիտ Միքայելյանը:

Եռօրյա միջգիտակարգային կոնֆերանսը Փարաջանովի հանճարի շուրջ համախմբեց փարաջանովասերներին և փարաջանովագետներին աշխարհի 12 երկրներից, որի աշխատանքներին մասնակցեցին միջազգային ճանաչում ունեցող առաջատար գիտնականներ և երիտասարդ հետազոտողներ Հայաստանից (ԳԱԱ արվեստի ինստիտուտից, Սերգեյ Փարաջանովի թանգարանից, ԳԱԱ արևելագիտության ինստիտուտից, Երևանի պետական համալսարանից, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտից, Երևանի Կոմիտասի

---

* *Ներկայացվել է 17. XI. 2024 թ., ընդունվել է տպագրության 21. XI. 2024 թ.:*

անվան պետական կոնսերվատորիայից), Ռուսաստանից, Ուկրաինայից, Վրաստանից, Ղազախստանից, Լեհաստանից, Ֆրանսիայից, Իտալիայից, Իսպանիայից, Պորտուգալիայից, Սերբիայից, ԱՄՆ-ից:

Եռօրյա կոնֆերանսի լիագումար 5 նիստերում և 3 պանելներում ներկայացվեց 55 զեկուցում:

Լիագումար առավոտյան նիստում (10 սեպտեմբերի) արվ. թ., Ռուս-Հայկական համալսարանի պրոֆ. Գարեգին Զաքոյանը *հանդես եկավ «Ինչու է անհասկանալի «Նռան գույնը»» զեկուցումով: Արվ. դ., պրոֆ., Ուկրաինայի արվեստի վաստակավոր գործիչ, Կիևի մշակույթի և արվեստների ազգային համալսարանի խորեոգրաֆիկ արվեստի ամբիոնի վարիչ* Ալեքսանդր Զեպպովը *(Ուկրաինա, Կիև) Ս. Փարաջանովի արվեստը դիտարկեց ուկրաինական բանաստեղծական կինեմատոգրաֆի համատեքստում: Արվ. թ., Իլիայի պետական համալսարանի պրոֆ.* Թեո Խատիաշվիլին *(Վրաստան, Թբիլիսի) ներկայացրեց «Հին Թբիլիսին Փարաջանովի քվազի-վավերագրական ֆիլմերում («Արաբեսկներ Փիրոսմանիի թեմայով», «Հակոբ Հովնաթանյան»)» զեկուցումը: Սոց. դ., պրոֆ., Օլշտինում Վարմիա և Մազուրի համալսարանի սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ* Մարեկ Սոկոլովսկին *(Լեհաստան, Օլշտին) հանդես եկավ «Սերգեյ Փարաջանով. երեք ազգերի ռեժիսոր և արտիստ» բանախոսությամբ: Նիստը եզրափակվեց փ. գ. դ., պրոֆ., Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի բիոէթիկայի ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի վարիչ, Լուսինե Զաքարյանի տուն-թանգարանի տնօրեն* Սուսաննա Դավթյանի *«Սերգեյ Փարաջանովի ստեղծագործության սոցիոլոգիական վերլուծությունը» զեկուցումով:*

Լիագումար երեկոյան նիստում (համանախագահներ՝ Թեո Խատիաշվիլի, Գարեգին Զաքոյան) բ. գ. դ., Բելգրադի համալսարանի բանասիրական ֆակուլտետի սլավոնագիտության ամբիոնի դոցենտ Անա Յակովլևիչ Ռադունովիչը *(Սերբիա, Բելգրադ) ներկայացրեց «Սերգեյ Փարաջանով. Պուշկինի և Լերմոնտովի պոեմների կինեմատոգրաֆիական ընթերցումը» զեկուցումը: Արվ. թ., ՌԴ մշակույթի նախարարության Արվեստագիտության պետական ինստիտուտի լրատվամիջոցների գեղարվեստական հիմնախնդիրների բաժնի ավագ գիտաշխատող* Եվգենի Մարգոլիտը *(Ռուսաստան, Մոսկվա) հանդես եկավ ««Մոռացված նախնիների ստվերները». կինեմատոգրաֆիական ավանդույթի վերածնունդը» զեկուցումով: Արվ. թ., դոցենտ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար* Ծովինար Մովսիսյանի *զեկուցումը նվիրված էր Փարաջանովի հեղինակած «Սասունցի Դավիթ» օպերա-բալետի անհայտ լիբրետոյի քննությանը: Արվ. թ.* Վերոնիկա Ժուռավլյովան *քննության առավ Ս. Փարաջանովի ստեղծագործությունը XX դարի երկրորդ կեսի – XXI դարասկզբի գեղարվեստական արդի հոսանքների համատեքստում: Աստվ. թ., Բարձրագույն հետազոտությունների պրակտիկ դպրոցի և մոնոթեիստական կրոնների ուսումնասիրության լաբորատորիայի աշխատակից, AELAC անդամ* Նարինե Կարսլյանը *(Ֆրանսիա, Փարիզ) դիտարկեց ժեստի և կերպարափոխության սրբությունը Ս. Փարաջանովի կինեմատոգրաֆում: Նիստը եզրափակվեց բ. գ. թ., «Էկոնոմիկայի բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի լիցեյի ռուսաց լեզվի և գրականության դասախոս* Տատյանա Կրիվկոյի *(Ռուսաս-*

տան, Մոսկվա) և նույն դպրոցի ուսանող Աննա Բաբախանյանի *(Ռուսաստան, Մոսկվա) «Սոֆիկո Ճիաուրելիի կերպարների խորհրդաբանությունը «Նռան գույնը» ֆիլմում» զեկուցումով:*

Կոնֆերանսն իր աշխատանքը շարունակեց սեպտեմբերի 11-ին: Առաջին նիստում (համանախագահներ՝ Մարգարիտա Քամալյան, Մարեկ Սոկոլովսկի) արվ. թ., Արվեստի ինստիտուտի սիյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող Արսեն Համբարձումովը *ներկայացրեց «Սիմվոլների և արքետիպերի նշանակությունը «Նռան գույնը / «Սայաթ-Նովա» ֆիլմի կառուցվածքում»», PhD, Օլշտինում Վարմիա և Մազուրի համալսարանի դասախոս* Աննա Դաշևսկան *(Լեհաստան)՝ «Կրոնական և հոգևոր մոտիվները Սերգեյ Փարաջանովի ստեղծագործության մեջ», Ուդինեի համալսարանի ասպիրանտ* Ֆիլիպպո Պերֆետտին *(Իտալիա)՝ «Փարաջանովի տեսողական ընդունելությունն Իտալիայում», Ղազախստանի Կուլյաշ Բայսեիտովայի անվան արվեստի ազգային համալսարանի Արվեստագիտության ամբիոնի ավագ դասախոս* Կամիլա Գաբդրաշիտովան *(Ղազախստան, Աստանա)՝ «Սերգեյ Փարաջանովի բանաստեղծական կինոլեզվի ազդեցությունը Սուլթան Խոջիկովի ստեղծագործության վրա», Dr hab, Յագելոնյան համալսարանի պրոֆ., Յագելոնյան համալսարանի տեսալսողական արվեստների ինստիտուտի տնօրեն* Յոհաննա Վոյնիցկան *(Լեհաստան, Կրակով)՝ «Սերգեյ Փարաջանովի «Խոտովանություն»-ը (1990)», իսկ Dr hab, Գդանսկի համալսարանի Լեհական բանասիրության ինստիտուտի դրամայի, թատրոնի և ներկայացումների ամբիոնի պրոֆ., XIX–XXI դարերի լեհական գրականության և մշակույթի ռուսագիտության ամբիոնի վարիչ* Էլժբիետա Միկիչյուկը *(Լեհաստան)՝ «Հայաստանի սուրբ արվեստը Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմում» զեկուցումները:*

Երկրորդ նիստում (համանախագահներ՝ Վերոնիկա Ժուռավլյովա, Եվգենի Մարգոլիտ) լսվեցին արվ. դ., պրոֆ., Արվեստների պատմության ռուսաստանյան ինստիտուտի կինոյի և հեռուստատեսության սեկտորի վարիչ Վիտալի Պոզնինի *(Ռուսաստան, Սանկտ Պետերբուրգ) «Գունային լուծումը որպես Սերգեյ Փարաջանովի ֆիլմերի ոճի անքակտելի մաս», PhD, անկախ հետազոտող* Մարիա Ռախմանինովայի *(Վրաստան, Թբիլիսի) և թատերական լույսի վարպետ, անկախ հետազոտող* Ստանիսլավ Յացենկոյի *(Վրաստան, Թբիլիսի) «Սերգեյ Փարաջանովի կինոլեզուն. ազատության երթուղիները կայսրության լանդշաֆտներում», արվ. թ., Սանկտ Պետերբուրգի մշակույթի պետական ինստիտուտի դոցենտ* Աննա Զոսիչի *(Ռուսաստան) «Սերգեյ Փարաջանովի ստեղծագործությունը որպես 1960–70-ական թվականների խորհրդային կինեմատոգրաֆի խորհրդանշական-գեղապատկեր ուղղության ֆենոմեն», արվ. թ., դոցենտ, Արվեստների պատմության ռուսաստանյան ինստիտուտի կինոյի և հեռուստատեսության սեկտորի ավագ գիտաշխատողներ* Լարիսա Բերեզովչուվի *(Ռուսաստան, Սանկտ Պետերբուրգ) «Ֆիլմ բանաստեղծ Սայաթ-Նովայի մասին. կենսագրակա՞ն, թե՞ քնարական կինոպոեզիա («Նռան գույնը» ֆիլմի ժանրի հիմնախնդիրը)» և* Դենիս Միլնիկովի *(Ռուսաստան, Սանկտ Պետերբուրգ) «Պայմանականության առասպելաստեղծ գործառույթը Սերգեյ Փարաջանովի և Դավիդ Աբաշիձեի «Լեգենդ Սուրամի ամրոցի մասին» ֆիլմում», PhD, Ուիլյամս Քոլեջի ռուս և համեմատական գրականության ամբիոնի*

դոցենտ Օլյա Կիմի *(ԱՄՆ, Մասաչուսեթս) «Մեդիումը, նյութականությունը և արդիականությունը Փիրոսմանիի թեմայով արաբեսկներում» բանախոսությունները:*

Երրորդ նիստում, որը կայացավ սեպտեմբերի 12-ին (համանախագահներ՝ Աննա Ասատրյան, Արարատ Աղասյան), PhD, գրականագետ, կինոգետ, արվեստի պատմաբան, երաժշտագետ Իվոնա Գրոդզը *(Լեհաստան, Պոզնան) հանդես եկավ «Նրանք նայում են միմյանց հավերժության միջով … Պոետիկայի և գեղագիտության հնագիտությունը Սերգեյ Փարաջանովի «Մոռացված նախնիների ստվերներում»» զեկուցումով, արվ. թ., Երևանի պետական համալսարանի դասախոս* Հռիփսիմե Վարդանյանը *քննության առավ Ս. Փարաջանովի կինոկադրը իբրև կտավ, իսկ արվ. թ., «Ծիրանի ծառ» միջազգային վավերագրական ֆիլմերի փառատոնի միջոցառումների ռեժիսոր* Նաիրա Սարգսյանը *բացահայտեց Փարաջանովի ֆիլմերում կինոձայնի կիրառման առանձնահատկությունները: Նիստը եզրափակվեց արվ. դ., պրոֆ., ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Արվեստի ինստիտուտի տնօրեն* Աննա Ասատրյանի *«ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ներդրումը Հայաստանում փարաջանովագիտության ձևավորման ու զարգացման գործում» բանախոսությամբ:*

Լիագումար նիստերին զուգահեռ՝ սեպտեմբերի 11-ին և 12-ին տեղի ունեցան նաև պանելային քննարկումներ:

Պանել 1-ի՝ «Սերգեյ Փարաջանովի նկարահանված և չնկարահանված ֆիլմերը» (սեպտեմբերի 11) առաջին նիստում (նախագահող՝ Աննա Երզինկյան) ԳԱԱ թղթակից անդամ, ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բաժնի վարիչ Լևոն Աբրահամյանը *հանդես եկավ ««Նռան գույնի» պոեզիան և պոետիկան» զեկուցումով, PhD* Ջեյմս Մայքլ Ստեֆենը *(Կինոյի և մեդիա հետազոտությունների գրադարան, Էմորի համալսարան, ԱՄՆ, Ջորջիա, Ատլանտա)՝ «Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմի բացահայտումները», PhD, հետազոտող* Սիմոն Ղարիբյանը *(Հարավային Կալիֆորնիայի համալսարան, ԱՄՆ, Լոս Անջելես)՝ «Աչուղ Ղարիբը մեռավ: Կեցցե Աչուղ Ղարիբը: Նեկրոպոետիկան Սերգեյ Փարաջանովի ֆիլմում», արվ. թ., Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի դոցենտ* Սիրանույշ Գալստյանը՝ *««Նռան գույնը». հեղինակային և ինքնակենսագրական, որքան պոեզիան», Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի օտար լեզուների և տարածաշրջանային գիտությունների ֆակուլտետի ազգային գրականությունների և մշակույթների համեմատական ուսումնասիրության ամբիոնի մշակութաբանության ամբիոնի մագիստրոս* Վանեսա Կարապետյանը *(Ռուսաստան, Մոսկվա)՝ «Սերգեյ Փարաջանովի «Շուշանիկի նահատակությունը» սցենարը պատմամշակութային համատեքստում. սուրբ Շուշանիկի կերպարի ստեղծման առանձնահատկությունները», իսկ բ. գ. դ., Երևանի պետական համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի պրոֆ.* Տիգրան Սիմյանը՝ *«Մշակութային և քաղաքային կոդերը կինոյում Սերգեյ Փարաջանովի «Հակոբ Հովնաթանյան» ֆիլմի օրինակով» զեկուցումներով:*

Պանել 1-ի երկրորդ նիստում (նախագահող՝ Լևոն Աբրահամյան) ներկայացվեցին բ. գ. թ., Հայաստանի կինոգետների և կինոլրագրողների ասոցիացիայի անդամ Դավիթ Վարդազարյանի *««Արա Գեղեցիկ». չնկարահանված ֆիլմի հետքերով՝ զարյանական գրական հենքից մինչև փարաջանովյան սցե-*

նարային տեսլական և արհեստական բանականության վիզուալիզացիա», ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆ. Աննա Երզինկյանի *(Հայաստան, Երևան) «Սերգեյ Փարաջանովի ֆիլմերի տեքստերը մինչ «Մոռացված նախնիների ստվերները»» և թատերական արվեստի մագիստրոս* Նորա Արմանիի *(ԱՄՆ, Լոս Անջելես) «Հայկական ազգային ինքնությունը Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմում» զեկուցումները:*

Պանել 2-ի՝ «Փարաջանով. ազդեցություն և երկխոսություն» (11 սեպտեմբերի) նիստում (նախագահող՝ Լևոն Աբրահամյան) լսվեցին գիտաշխատող Մաթիլդե Մարթիմ Պիրես Դիասի *(Պորտուգալիա, Օեյրաշ)՝ «Ազգագրական պոեզիայի նկարահանումները. Իրժի Տրնկայի և Սերգեյ Փարաջանովի երկխոսությունը», բ. գ. թ., Երևանի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի դոցենտ* Լիլիթ Սաֆրաստյանի՝ *«Սերգեյ Փարաջանովի կինոռեռագիրը Մոհսեն Մախմալբաֆի «Գաբբե» ֆիլմում. ծեսի և գույնի փոխաբերություն», Կորդովայի համալսարանի ասպիրանտ* Ելենա Գալեա Պոզոյի *(Իսպանիա)՝ «Դեպի երկինք ձգվող արմատները. միստիցիզմի և հոգևորի ուսումնասիրությունը Սերգեյ Փարաջանովի ֆիլմերում», փիլիսոփա, թարգմանիչ, հոդվածագիր* Նարի Գալստանյանի *(Ֆրանսիա, Փարիզ)՝ «Սերգեյ Փարաջանով և Անդրեյ Տարկովսկի. Խորհրդային Միության խորհրդավոր թռչունները», ազգագրագետ, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Սիբիրի մասնաճյուղի հյուսիսային փոքրաքանակ ժողովուրդների հումանիտար հետազոտությունների և պրոբլեմների ինստիտուտի գլխավոր գիտաշխատող* Եկատերինա Ռոմանովայի *[Ռուսաստան, Սախա Հանրապետություն (Յակուտիա), Յակուտսկ]՝ «Սերգեյ Փարաջանովը և յակուտական կինեմատոգրաֆի ծնունդը. ձյան գույնը, լեգենդները և արևային ձիերը», պ. գ. դ., Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ազգաբանության և մարդաբանության ինստիտուտի առաջատար գիտաշխատող* Էլզա-Բաիր Գուչինովայի *(Ռուսաստան, Մոսկվա)՝ «Ազատագրման փորձը Սերգեյ Փարաջանովի և Յասուո Կաճուկիի ստեղծագործության մեջ» զեկուցումները:*

Պանել 3-ի՝ «Փարաջանովը անձ և արվեստագետ» (սեպտեմբերի 12) առաջին նիստի (նախագահող՝ Հռիփսիմե Պիկիչյան) ծրագրում ընդգրկված էին ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ, Ս. Փարաջանովի թանգարանի տնօրեն Անահիտ Միքայելյանի՝ *«Սերգեյ Փարաջանով անհատը», մագիստրոս, մշակութաբան, Ս. Փարաջանովի թանգարանի գլխավոր ֆոնդապահ* Մարիաննա Մանուչարյանի՝ *«Պարը Փարաջանովի արվեստում», պ. գ. թ., դոցենտ, ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի ավագ գիտաշխատող* Համլիկ Հմայակյանի՝ *«Սերգեյ Փարաջանովի կոլաժնատյուրմորտների սիմվոլիկայի շուրջ», Ռուսաստանի պետական հումանիտար համալսարանի արվեստի պատմության ֆակուլտետի ուսանողուհի, Ս. Փարաջանովի թանգարանի էքսկուրսավար* Համլիկ Գևորգյանի՝ *«Դիմակը Սերգեյ Փարաջանովի կինոարվեստում», արվ. դ., Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտության տեսության ամբիոնի պրոֆ., ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ* Սվետլանա Սարգսյանի՝ *«Սերգեյ Փարաջանովի գաղափարների հետագիծը», գրող և կինոռեժիսոր* Դենիել Բըրդի *(Ֆրանսիա, Փարիզ)՝ «Կինոյի տաճարը» և «Սերգեյ Փարաջանովի հետքերով» արտնախագծի գաղափարի հեղինակ* Ռեգինա Ռոստոռոցկայայի *(Ռուսաստան,*

Մոսկվա)՝ «Սերգեյ Փարաջանովի հետքերով», իսկ երկրորդ նիստի ծրագրում (նախագահող՝ Տիգրան Սիմյան)՝ Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ասպիրանտ, Վ. Ի. Դալի անվան պետական գրական թանգարանի գիտաշխատող Անաստասիա Նեչայևայի *(Ռուսաստան, Մոսկվա)՝ «Հիշողության հետ աշխատանքը Սերգեյ Փարաջանովի ստեղծագործության ակֆեկտիվ պոտենցիալում», գրող և լրագրող* Մարկ Գրիգորյանի՝ *«Փարաջանով. մահը և հուղարկավորությունը», Վ. Ի. Դալի անվան ռուս գրականության պատմության Պետական թանգա-րանի էքսկուրսավար* Նատալյա Կրեմենեցի *(Ռուսաստան, Մոսկվա) «Վ. Ի. Դալի անվան ռուս գրականության պատմության Պետական թանգարանի «Սերգեյ Փարաջանով: Հավերժական թռիչք» ցուցահանդեսը որպես Փարաջանովի ստեղծագործության ուսումնասիրության և հանրահռչակման միջոց», պ. գ. թ., ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, Երևանի պետական համալսարանի մշակու-թաբանության ամբիոնի դոցենտ* Հռիփսիմե Պիկիչյանի՝ *«Ավանդական ծեսերի վերակերտումն ու մեկնաբանումը Սերգեյ Փարաջանովի կինոաշխարհում» և կինոռեժիսոր, նկարիչ, արվեստաբան, բանաստեղծ* Տատյանա Դանիլյանցի *(Ռուսաստան, Մոսկվա)՝ «Սերգեյ Փարաջանովը և Վենետիկը. վերաբացահայտելով աշխարհ-ներ» զեկուցումները:*

Կոնֆերանսի լիագումար նիստերի շրջանակներում տեղի ունեցան Ս. Փարաջանովի ստեղծագործության ուսումնասիրության հարցերին նվիրված և ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ Ս. Փարաջանովի հոբելյանին ընդառաջ հրատարակված հայ ականավոր կինոգետ Կարեն Քալանթարի «Очерки о Сергее Параджанове» *աշխատության 2-րդ հրատարակության (Սանկտ Պետերբուրգ, 2023), պրոֆ. Սուսաննա Դավթյանի «Տոն, որ միշտ քեզ հետ է» եռալեզու (հայերեն, ռուսերեն և անգլերեն) աշխա-տության (Երևան, 2024) և* “Tribute to Sergei Parajanov. On the centenary of artist’s birth” *գիտական հոդվածների ժողովածուի [խմբագիր՝ պրոֆ. Մարեկ Սոկոլովսկի, Պոզնան (Լեհաստան), 2024] շնորհանդեսները: Վերջինս արժա-նացավ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Դիպլոմի:*

Միջազգային փարաջանովագիտության ոլորտում ունեցած ծանրակշիռ ավանդի համար պրոֆ. Մարեկ Սոկոլովսկին ու վրաց փարաջանովագետ պրոֆ. Թեո Խատիաշվիլին պարգևատրվեցին ԳԱԱ արվեստի ինստիտուտի Պատվոգրերով:

«Սերգեյ Փարաջանով–100» միջազգային գիտական կոնֆերանսի արդ-յունքները դարձան նոր խոսք ու կարևոր հանգրվան հայ արվեստագիտութ-յան և միջազգային փարաջանովագիտության ասպարեզում:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Արվ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, երաժշտության բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունը՝ նոր և նորագույն շրջանի հայ երաժշտության ուսումնասիրություն: Հեղինակ է 12 մենագրության և շուրջ 240 հոդվածի: ORCID:0000-0002-0023-1752. instart@sci.am